

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՆՈՒՆ, Ապրիլի փոփոխ

ՄՈՒԳԱԹՄՈՒՆ ԴՆՆՆ ԴԻՆԱԳ

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄՆԵՐ

ՄԵԿ անգլա-համար տողը 3 ընդ. ողջ.
ՄԵԿ անգլա-համար տողը 3 ընդ. ողջ.
ՄԵԿ անգլա-համար տողը 3 ընդ. ողջ.

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՊՐԻԼԻ ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան 100
Վեցամսեայ 53
Եռամսեայ 30


ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ ԶԱՄԱՆ

Տարեկան 26
Վեցամսեայ 14

ԵՏ ԳԻ ՏՐՈՒՄԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂՈՒՄՈՒ

ՈՒՆԻ Ե ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՏՈՐԵՆԻ-ԽՈՐԱՅԻՐ Յ. ԱՆՓՈԹԻՐ

ԽՆԴՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Ամսվերջի այս միջոցին ուր իրա-
րու կը յաջորդեն տօները, անուա-
նակութիւնները և հարսանիքները
իրենց հետ բերելով խանգ ու ժպիտ
և ընդհանուր ցնծութիւն մը, կարծես
լայն և զոհ շունչ մը առնել տալու
համար մեզի մեր ամբողջ տարուան
յոգնութիւնէն, տքնութիւններէն և
վիշտերէն, այս միջոցին, այո՛, ան-
խուսափելի կերպով մտքերնիս կու-
գայ նաև զրկուածներու, որբերու,
տնանկներու և ցաւազարներու մեծ
ընտանիքը որուն հետ սերտ դրաց-
նութեամբ մը և սրտի անխզելի կա-
պերով կապուած կ'զգանք մենք ըզ-
մեզ:

Մեզի համար եթէ ուրախութեան
օրերը կը մօտենան, ասդին անտե-
րու և անտեղի քան երբեք դժբաղդ կ'զգան
իրենք զիրենք որքան կը մօտենայ
կազանդը, Ծնունդը և այն ամեն տօ-
ները որոնք ուրիշ բանի չեն ծառա-
յեր իրենց համար, բայց եթէ շեշ-
տելու այն խրամատը որ զիրենք կը
բաժնէ երջանիկ եմթադրուած աշ-
խարհէն:

Ահա ասոր համար է որ զարգա-
ցեալ ազգերու մէջ գլխութեան գոր-
ծը ամենէն աւելի եռանդով առաջ կը
տարուի տօնական օրերու մէջ:

Պատառ մը հաց տալ անօթի եղո-
ղին և սրբել տառապողին արցունք-
ները, որբին յուսահատութիւնը մեղ-
մացնել, պարտականութիւն մըն է
որմէ չի կրնար խուսափիլ ճշմար-
տագէտ մարդասէր եղողը և այն որ
բիշ շատ զգացում կը կրէ կուրծքին
տակ:

Զրկուածներու մեծ բարեկամը
Քրիստոս իր վարդապետութեան հիւ-
մը դրած է փոխադարձ օգնութեան,
սիրոյ և զթութեան վրայ և երբ իր
Ծննդեան սուրբ օրերուն կը մօտե-
նանք, ամեն ժամանակէ աւելի կ'ըզ-
գանք պէտքը կատարելու իր պատ-
ուէրը որ չի հիշնար, չի մոռցուի:
որբան դարբըր իրարու յաջորդեն և
մարդկութիւնը ծերանայ:

Ահա՛ ինչու, մեր լրագրողի հան-
գամանքով, մեր ընթերցողներուն ի-
րենց այս մէկ նուիրական պարտա-
կանութիւնը յիշեցնել պարտք կը

համարենք, վստահ ըլլալով կանխա-
թէ մեր թեւագրութիւնները յաջո-
ղութեամբ պիտի պատկուին և մեր
կոչը ապարդիւն չպիտի մնայ:

Քաղաքիս Աղբատախնամ և Ու-
բախնամ ընկերութիւնները որոնք
շատ գովելի եղանակով կը կատա-
րեն իրենց յանձն առած պաշտօնը՝
հարուստին և աղքատին միջև զըտ-
նուող միջնորդներն են որոնց մար-
դասերական գործը դիւրացնել և ար-
դիւնաւորել քրիստոնէավայել պար-
տականութիւն մըն է որ մեր վրայ
կը ծանրանայ:

Տալ աղքատին և որբերուն մեր
հաճոյքին և անձնասիրութեան հա-
մար ծախսուած զրամէն մաս մը,
նոյն իսկ փոքր, աննշան, մեր աւե-
լորդէն բաժին հանել անոնց, որքան
զիրեն և անուշ բան է, Աստուած իմ:

Ամսվերջի այս օրերուն մէջ բանի՛-
քանի՛ առիթներ չեն ներկայանար
մեզի, առանց նեղուելու և անշնա-
բելի կերպով կատարելու գլխութեան
գործը որուն յեզօմն է կարծես Նոր
Տարին և Ծնունդը, յեզօմն մը որու
միջոցին իրարու կը յաջորդեն հար-
սանիքները, նշանախօսութիւնները,
այցելութիւնները և երեկոյթները ու-
րոնց համար այնքան անօգուտ ըս-
տակներ կը վատնենք սակայն:

Պոլսոյ ազգայինները տարիներէ ի
վեր «Փոխան ծաղկեփունջի» զրու-
թիւնը գտած են որմէ հազարաւոր ու-
կիներ կը գոյանան ի նպաստ Սուրբ
Փրկչեան Հիւանդանոցին և ուրիշ մար-
դասերական հաստատութիւններու:

Ինչո՛ւ, հոս՝ Երկրպագի մէջ այդ
օրինակին չի հետեւինք և չընդունինք
այդ սովորութիւնը քանի որ զիրեն
և օգտակար կերպով գլխաւոր գործ-
նական միջոց մըն է այդ:

Վաղը, միւս օր հարսանիքներ պիտի
ունենանք և ստիպուած պիտի ըլլանք
ընծանելու և ծաղկեփունջեր զրկել
հարսին ու փեսին: Եւ ոչ իսկ օր մը
պիտի տեսնեն այդ ծաղկեփունջերը ու-
րոնց համար սակայն ոսկիներ տուած
պիտի ըլլանք:

Ինչո՛ւ այդ դրամը որ եւրոպացի
խանութեաններու քսակը պիտի պա-
րարտացնէ, չի գործածենք լաւագոյն
նպատակի մը որմէ օգտուին հայ աղ-
քատը և հայ որբերը:

Մեկ ծաղկեփունջի զինք որք մը
կը պահպանէ տարի մը ամբողջ. մեզք
չէ՛ ուրեմն օտարին տալ այդ դրամը
որ այնքան ցաւեր կրնայ դարմանել:

Աղբատախնամ և Ուրբախնամ ըն-
կերութեանց միացեալ անտուկին զըր-
կել ծաղկեփունջերուն յատկացուած
զուամբները այնքան վայելուչ և օգ-
տակար բան մըն է որուն պիտի յա-
րին ապահովագէտ ամեն մարդասէր
սրտեր և կը սիրենք յուսալ որ «Փո-
խան ծաղկեփունջի» զրութիւնը
տարուան նորաձեւութիւնը պիտի ըլ-
լայ որուն պիտի հետեւին հարուստ
և միջակ զաւակաւորքը:

Նոյնպէս Ծննդեան օրերու այցե-
լութենէ զերծ մնալու համար տալ
այդ անտուկին որեւէ զուամբ մը, այս
ալ սովորութիւն մըն է ի Պոլսի որ
պէտք է նաև եղկպտահայերուն ալ
ըլլայ, քանի որ ասիկէ ալ կրնան օգ-
տուիլ վերոյիշեալ ընկերութիւնները
որոնց հասոյթը՝ նպատակներուն մե-
ծութեան չափով առատ չէ:

ԱՄԵՆ ՈՒՂՂԱՅ ՄԵԿ ԶՈՐՈՒՄԸ

Բարեկիւրտ Ռաշիդ իր Դեկտեմբերի
թիւին մէջ կը հրատարակէ Երիտասարդ-
թուրքերուն պետերէն Ահմետ Ռիզա պէյի
մէկ յօդուածը Տաճկաստանի մէջ եւրոպա-
կան քաղաքականութեան վրայ: Ստորև կ'ա-
տարարենք այդ ուսումնասիրութեան աչքի
զարնոյ կէտերը:

«Պետութիւններուն արդի քաղաքականու-
թիւնը ի մեզ տրուածքներ իրենց գործերը
կարգադրելու և իրենց համար վաճառակա-
նական շահագործութեան նոր առարկաներ
ստեղծելու համար խաղաղասէր ժողովուրդը
շախմատելու արուեստին մէջ կը կայանայ:
Անսահմանօրէն ընդարձակել առևտրական
շահերուն շրջանակը, առանց կարեորութիւն
տալու բարոյական շահերուն, ահա ինչի կը
ձգտին բոլոր իրենց հնաբանութիւնները:
Մարդասիրական և կրօնական պարտակա-
նութեանց զգացումները կեղծաւորական
պատճառներ են. ոչ ոք — ի բաց առեալ
հազուադէպ բացառութիւնները — այլ ևս
չի հետաքրքրուի հարստահարականներուն
վիճակով, ցաւերով, կոշով:

«Այնքան նուազ մարդասիրական այս
քաղաքականութեան վերահասու ըլլալու հա-
մար կը բաւէ փնտռել թէ ինչ ըրին պե-
տութիւնները իրենց պատերազմին ի վեր,
այսինքն այն օրէն ի վեր ուր զաշնադրու-

թիւնը Տաճկաստանը վերականգնանելու
համար հաւաքական միջամտութեան մը
իրաւունքը կուտայ իրենց: Արեւելք զրկեցին
բաղդախնդիրներու վոհման մը որոնք մարա-
խի ամպի մը պէս խեղճ օսմանցիներուն
վրայ թափեցան բոլոր հարստութիւնները
լափելով:

«Երջանիկ պիտի ըլլային եթէ զիտնայի
թէ որն է այն եւրոպական պետութիւնը որ
անկեղծօրէն ցոյց տուած ըլլայ օսմանեան
կայսրութեան իսկական և կենսական շա-
հերուն ծառայող դարման մը, տանց թա-
քուն նպատակի և միայն մարդկութեան
բարօրութեան հոգածութեամբ: Եւ կը ճանչ-
նամ միայն պետութիւններ որոնք ունենա-
նք իրենց կամ սպառնացան ուժաւորել մեր
նաւահանգիստները զրամական խնդիրներու
կամ կրօնական չնչին և ողորմելի վե-
ճերու համար: Այդ, վայրագ կրօ-
նամոլութիւնը աղէտներու յատուկ ձիւրը
մը չէ: Անոնք որ թուրքերը բարբարոսի
սեղ կը դնեն միթէ գերագանց առաքինու-
թիւններ ունին, մանաւանդ այն առաքի-
նութիւններէն զորոք կը սիրեն քրիստոնէա-
կան անուանել:

«Այս նրբացած քաղաքականութիւնը
զորս Արեւմտեք ներկայացնել կը համարի
յաճախ ուրիշ բանի չի գործածուիր բայց
եթէ ջախջախելու Արեւելքը և անոր վրայ
իշխելու և ասիկա միշտ միջնադարեան եղա-
նակաւ, այլամերձ քրոստոնէութեան մը մի-
ջոցով և ազատ և անկախ բարոյականի մը
երեւոյթներուն ներքեւ:

Ահմետ Ռիզա պէյ անողորմաբար կը մեր-
կացնէ Եւրոպայի կեղծաւորութիւնը Դրան
հետ ունեցած պաշտօնական և ձեռ-
կերպական յարաբերութիւններուն մէջ:
«Բանապետ մը շնորհատուրը ներսնակա-
նութեան աստուածացումն է, ամենէն ոճ-
րագործական ձեռնարկութիւնները քաջալե-
րել ըսել է, վերջապէս, խաղաղութեան մըր-
ցանակ մը տալ կը նշանակէ, թէ՛ բարոյա-
կան և թէ՛ քաղաքական տեսակետով: Ու-
րովհետեւ կարելի չէ ուրանալ թէ, եթէ ոչ
իսկական, գէթ բարոյական մեղսակցութիւն
մը կայ ոճրագործի մը և անոր արարքը
զրուատողի մը միջև»:

«Պետութիւնները իրենց սերմանածը կը
քաղեն այսօր, իրենց անյազոյթութեամբ,
մեղսակցութեամբ, Արեւելքի մէջ իրենց ազ-
դեցութիւնը վտանգեցին: Դրան ալ առի-
թը ձեռքէ չի փախցնել պետութիւններու
վարկը կոտորելու և անոնց ազդեցութիւնը
նուազեցնելու համար օսմանեան աշխար-
հին մէջ:

«Եւրոպան փոտած է, կ'ըսէ, հոն ամեն
բան ծախու է մամուլը ինչպէս նաև քա-

Յ. ԲԵՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՑԵՂԻ ԳԱՀԻՐԷ, — ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱՊԹԻԹԵԻ ՇԷՆԳԻՆ ԴԵՄ

դաքական անձնավորությունները. կը բաւէ որ դրամը չի խնայուի»:

Ահա Ռիդա պէյ ուսմանը կը գտնուի զետեղեցողներուն իրենց քաղաքական կամ բարոյական չնչին արժանիքներն, Արեւելի գործերուն մասին իրենց տղիտուններն, իրենց գոռոզ և զաւակն բնաւորութեանը համար: Կը պնդէ թէ մեծ պատասխանատուութիւն մը ունին երկրին արդի խառնակութեան մէջ, և տեղական իշխանութիւններուն կանոնաւոր պաշտօնավարութեան ջրհաստման պատճառներէն մին եղան: Ինչ ընելու է հիմա:

«Հարկ է որ, կ'ըսէ Ահա Ռիդա պէյ, Եւրոպան կամ մասնաւոր Ֆրանսան — Արեւելի մէջ ֆրանսական քաղաքականութեան մասին միայն կը խօսիմ. հոս — վերջապէս հասկնայ թէ իր շահերը կը հրաւիրեն իրեն բացարձակ համաձայնութեամբ ապրելու մահաւանդ ժողովուրդներու հետ, յարգելու անոնց ազատութիւնը, անոնց աւանդութիւնները, մինչև իսկ անոնց նախապաշարութիւնները: Ահա Ռիդա պէյ, որ Ֆրանսան, որ նոյնպէս խառնակ պետութիւն մըն է, օգնէ այս ազգերուն՝ քաղաքակրթութեան հովանիին ներքէ բարգաւաճելու:

«Եթէ ռամկավարական Ֆրանսան կուզէ Արեւելի մէջ մեծ պետութեան իր դերը պահել, պէտք է գործէ իրր զուտոր Մեծ Յեղափոխութեան և ոչ թէ իրր Եկեղեցիին «առջինեկ գլուխը»:

«Առեւտրը յետադիմական և կղերական քաղաքականութիւն մը նշանակութիւն մը ունէր, բայց առիկա այսօր չի համապատասխանէր ոչ Ֆրանսայի արդի յղացումներուն և ոչ ալ Թուրքիոյ ժառանգական և նիւթական պետքերուն: Յետոյ կը հաստատուի թէ միապետութեան քաղաքականութիւնը Արեւելի մէջ, աւելի ազատական, աւելի յառաջդիմական եղաւ քան Հիւսիս-Արեւելի մէջ: Այն աստիճանի կառավարութիւնը Կ. Պոլսոյ մէջ աշխարհական ուսումնարաններու հիմնադրութեան կը սատարէր. Ֆրանսո-թուրքական վերջին միջազգայն ազդեցոյց տուաւ թէ այսօրուան կառավարութիւնը ինչ բանի վեհանաժարէն կը նուիրէ իր անկախութիւնը...»

«...Թուրքերը երբեք չիպիտի դադրին յարգելէ կրօնական բոլոր դաւանանքները անխտրաբար: Միայն թէ թող չի մոռցուի թէ կրօնական թոյտութեամբ կը հասկը, նախ պաշտամունքի ազատ կատարումը և ոչ թէ անկարգութիւն մը որ թողարկէ սովորական անգիտելիքները իրենց աւարին վրայ խոյանալու ի փառ տեղացիներուն: Տարակոյն»

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (41) ԺԸՀԱՆ ՏԻՎՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՌԱՐՔԵՐԷ ՆԵՐՇՆՁՈՒԱԾ ՎԷՊ

ՊԼՈՒԹ Թ.

—Կը կարծէք որ բրէնսը իմ մասին խօսած ըլլայ, օրիորդ:

Ժերմէն չէր կարծեր. սակայն, ուղեւոր իր ընկերակիցին սիրտ տալ, չհամարձակեցաւ իր կարծիքը յայտնել անոր, ու պատասխանեց:

—Բայց հարկաւ, կը յուսամ, սիրելիս, խոստացաւ ինձի:

—Գտա՞ր, խոստացաւ... Ինչ կ'ըլլայ

չիկայ թէ ֆրանսական կառավարութիւնը երբեք մասնակցած չէ կրօնական ազանդաւոր քաղաքականութեան, այսու հանգրձն բոլոր պատասխանատուութիւնը իր վրայ կը ծանրանայ երբ կը պաշտպանէ քարոզչներ որոնք կ'արհամարհեն ինչ որ նուիրական և յարգելի է մահաւանդութեանը: Երկրպագու-կութիւններուն մէջ իրենց իշխանութիւնը ամբողջելու ջանալով, կը գրգռեն ատեւութիւններն ու նախանձուտութիւնները՝ իրենց պաշտպանեալներուն խոստանալով կառավարութեան նեցուկը: Բախտախնդիրներու տրուած այդ նեցուկը չարաշուք հետեւանքներ միայն կրնայ ունենալ»:

Ահա Ռիդա պէյ հետեւալ կերպով կը վերջացնէ:

«Աղբի մը համար միւս բարեկամ ազգերուն տրուած ծառայութիւններով միայն կ'աճի և կը պահպանուի: Արդ, Թուրքիան զարեւոր բարեկամ մըն է Ֆրանսայի, այս բարեկամութիւնը զարեւոր աւելի հին է քան այն անձնատրուութեան զաշխնները զորս այնքան չարաշուք կը գործածեն այսօր: Ուրեմն Թուրքերը իրաւունք ունին Ֆրանսային սպասելու արդարութեան և ազատական ու մարդասիրական գաղափարներու աւելի համեմատ քաղաքականութիւն մը:

«Աղբի կը թուի թէ ժամը եկած է որ այս մեծ երկրին վեհանաժար տրտեր իրենց պարտականութիւն մը համարին Թուրքիոյ վերականգնումին օգնելու»:

ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ՄԵՆԱԳԱՐՈՒԹԻՒՆԸ

Մենք ալ ունինք մեր մենագրութիւնները, ինչ կարծեցիք:

Իրաւ է թէ գրելու համար ստեղծիս ստորի մէջ գնելու չափ առաջ չենք երթար, բայց մենք ալ, մեր կարգին, խենդութիւններ ունինք խեղճութիւններ արտադրելու, ու զարմանալի մենագրութիւններ որոնք originalité տեսակետով, միաներուն ըրածքն վար չեն մնար:

Այս բաժին իրր հաստատութիւն, շէնորհ ըրէք կարգալ հետեւալ տղերք որոնց մէջ պիտի գտնէք մեր էն նշանաւոր գրադէտներուն աշխատելու եղանակը:

Բիզանդոյ Գէլէան, օրինակի համար, խմբագրական մը գրել չ'սկսիր եթէ կէս ժամ առաջ 96 դրոշի մէջովը 108 դրշ. ծախած չըլլայ Բեռլինի Նախաժեռ:

Գրիգոր Զոհրապ իր լուսագոյն նորայեւ պերը դատ մը կորսնցնելէ և սիրտ մը վատկելէ ետք կը գրէ միշտ:

Խոստումէն. ալ վատահոլութիւն չունիմ անոնց խոստումներուն, շատ սրտոգամ մեկնեցաւ. հանրմը ըսեալ ալ աւելի սրտոգամ էր այսպիսի եղանակի մը անոր մեկնիլը տեսնելով. բոլոր ուժովը դէմ կեցաւ, և երբէկ մէջներին անդի ունեցած սաստիկ վիճաբանութիւն մը լսեցի... Հիմայ կը կարծէք որ այդ վայրկեանին զիս մաքերուն անցուցին... Սթա Ապուհան մարդու տեղ պիտի գնէին:

—Ինձի նայէ, անուշ, ինչո՞ւ առաջուց միտքդ կը տանջես. մնաց որ, եթէ պէտք ըլլայ հանրմին հետ խօսիլ, ինչպէս որ երբէկ բրէնսին խօսեցայ, անոր ալ կը խօսիմ... Կ'ուզե՞ս որ երթամ տեսնեմ զինքը:

—Աղէկ գիտէք որ նոյն բանը չէ, ըստ աղջիկը սաստիկ արտածած. իր օրդոյն պէս պատճառներ չունի ձեզի գոհացնելու:

Եղիա Տէմիրճի-Պաշիան մենագրութեան համար մասնաւոր ժամեր չունի, սակայն շարունակ կը գրէ:

Արփիար Արփիարեանի մենագրութիւնը գրելէ ետքը կ'սկսի:

Լեոն Բաշաշեան զրաւեղանին առջև չի նստիր եթէ վերը 9¹/₂ սանթիմէթ օձիքի մէջ չի խեղճէ:

Յովհաննէս Շահնազար սենեակին մէջ վեր վար կը պտըտի, բէշ մը կ'երգէ, բէշ մը կը մղտայ և ապա կ'սկսի աշխատիլ: Զօպանեան մագրը չի սանտրեր գրել կարենալու համար:

Տիգրան Արփիարեան գերասան մը կամ վարժապետ մը մեռնելու է որ գրելը ձեռք առնէ:

Տիգրան Կամարական գրելու համար պէտք է որ սեղանին վրայ գտնուի՝ Ֆիկլարի մը, Տօմէի կամ Մարասանի մէկ վեպը, իրեն յատուկ սիկարէթները, Մարտին վերջին թիւը և հատ մը Տալիտէն բերել տուած ֆուսթայներէն:

Արաքսիա Այվազեան մինչև որ Երուսաղէմ չերթայ բաւ մը չարտագրեր:

Երուսաղէմ Օտեան կամ հիւանդ ըլլալու է և կամ ֆոֆօզ լաւ բաներ գրելու համար և ասոր համար է որ միշտ աղւսք բաներ կը գրէ:

Զարեհ Եսաուֆեան նախ գեղին ժամկէտն հետ կէս ժամ կը տեսնուի, երազահանը կը թղթատէ և ապա Նիւմիք մը գրպանը դնելով կ'սկսի աշխատիլ. ինչ որ շատ գէշ կ'ընէ... անմարտդութեան տեսակէտով:

Հրանտ Ասատուր՝ չի կարգուած, նախ Սիպիլին կերթար և ապա կը գրէր, կարգուելէն ետքը... vice-versa:

Մըմբեան՝ ամերիկեան վարտիքով կաշխատի:

Յ. Ա.

(Շարունակելի)

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Աղեքսանդրիոյ մեր թղթակցէն.

Գիր. Այվազեան Եպիփանուս միջադեպութեամբ կը տառապի և ըստիպուած է անկողնոյ ծառայել: Այս պատճառաւ խնդրած է տեղւոյ վարչութեանէն որ ութ օր ևս յետաձգուի Աղբ. Ընդհ. Ժողովը որ վաղը պիտի գումարուէր:

— Թաղական խորհրդոյ քարտուղար Տիգրան Լեոն Միկարչեան պաշտարար:

Իմ պատճառաւ անախտ բաներու պիտի նշմարկուիք, ու չեմ ուզեր:

Բանի մը օրէ ի վեր այն յորձեռանդն աղջիկը շատ փոքուած էր. իր փոքրիկ կրնոյ հոտառութեամբ կը գուշակէր որ իր բախտը կը վճռուէր, ստուգապէս որոշուած էր այս ժամուն. թէ Մուրաա բան մը չի պիտի ընէր... նոյն իսկ թերեւ գործին կուգար վերջը լուծել իրմէ այն չարաշարանքներուն համար՝ զոր Ժերմէն անոր կը պատճառէր:

Հիմայ, զղջալու ելած էր ընդունած ընտիր դատարանութեանը վրայ, գրեթէ կը ցաւէր իր բարեկամութեան ճանցած ըլլալուն և այնչափ ամբողջովին անոր յարած ըլլալուն, եթէ այսպէս չըլլար, կը փախէր, կ'ելար մօրը կ'երթար, իրենց տնակը Պուլաք, և հոն, նորէն ֆէկլահ դարձած, կը

տօնէն հրաժարեցուցուած է. իր յաջորդը դեռ չէ նշանակուած:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Մանթաշօփ աշխարհածանօթ տան Գահիբէ գործակալ Տիգրան Մ. Անանեանց, միեւնոյն պաշտօնով Հնդկաստան կոչուած ըլլալուն, երկու ամիսէն քաղաքէս պիտի մեկնի:

Տիգրան Անանեանցի մեկնումը շատ ցաւ պիտի պատճառէ ազգային շրջանակներու մէջ ուր գործունէութեան, աշխոյժի և առատաձեւութեան տեսակետով խիստ յարգուած գէմը մը եղած է միշտ:

— Յառաջիկայ երկուշաբթի Աղեքսանդրիոյ մէջ տեղի պիտի ունենայ Մարտիան Միկարչեանի և Սիկարէթեանի Անանեան Ընկերութեան Թանթայի ճիւղին տնօրէն՝ Տիգրան Կարապետ Էստրէլեանի ամուսնութիւնը ընդ Օր. Վիլիամ Սարգիսեանի, դուստրը ծանօթ վաճառական Տիգրան Գեորգ Սարգիսեանի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԽԱՐԿԷՆ

Կ. ՊՈԼՍՈՅ անդիական գետպան Բ. Դրան ազգաբարձրը մը ուղղեց որով կը բողբէ Թուրք կառավարութեան դէմ որ որոշեր է հանքեր փնտելու համար նոր արածութիւններ չի տալ և չի նարգել հին հրամանագրերը մինչև որ պատրաստուելու վրայ եղող նոր կանոնագիրը հրատարակուի: Դեպքանատունը կը յայտարարէ թէ նոր կանոնագիրը յետադեմի գործութիւն չի կրնար ունենալ:

ՄԻՍ ՍԹՈՆ. — Ամերիկայի գետպանատան առաջին թարգմանը և քաղաքներու ընկերութեան գանձապետը գեկտեմբեր 17 ինչ Կ. Պոլսէն մեկնեցան Արա Սթոնը պահող յեղուակներուն հետ բանակցութեան միտնելու համար: Պատուիրակները լիազօր իշխանութիւն ունին գերիներուն ազատութիւնը սակարկելու համար:

Տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ Թրքական հողին վրայ:

ՏԵՂԱԿԱՆ

Պատերազմական նախարարութիւնը որոշեց յառաջիկային ջնջել Ասուանի պահակաւորները: Այս որոշումը տրուեցաւ որովհետեւ այդ պահակաւորներն զոյգութիւնը անօգուտ էր: Տրամադրելի գործերը Պահարար:

մոռնար մեծամեծները՝ որոնց խոստումները օգտուող էին միտն, որոց գողտնքները՝ միայն խաբկանք. թերեւ այն ժամանակ բարի ժարգու մը կը հանդիպէր որուն կենը կ'ըլլար, ազատ ու զուարթ կ'ապրէր անխախտութեան մեծ որախտութեան մէջ, փողոցներուն պայծառ արեւուն տակ, ուրիշ օրէնք չունենալով բայց միայն իր կամքը, ուրիշ նպատակ չունենալով՝ բայց միայն իր սիրած մարդուն գոհութիւնը և հաճոյքը:

Բայց ինքը հանրմի պէս բան մը եղած էր... անոնց շարքերէններուն հետ մէկ տեղ, ծածկ էր պերճանաց ու ծուլութեան ճաշիկ... շիտակ ինչ աղւոր կնիկ կըլնար ըլլալ աղքատ մարդու մը համար... Անկարող մինչև իսկ հաց թրելու կամ կրակ մը վառելու. իր բովանդակ գործնական ճարտարութիւնը իր կարգապիկները կա-

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՆՈՐՔԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 ՎՅ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՁԵՐՔ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը գործարէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, գաւազան դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՑԻ սակագինը և ապահովագրութեան գանազան գրութիւնները չուսումնասիրած մի՛ ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններու՝ Տեղեկութեանց համար գիտելի ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԳԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԻՅԵՐ, Ընդհ. ներկայացուցիչք։ Աղեքսանդրիա Սնթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալուտար։ Գ. ԵԿԱՒՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԵՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱԴԼՈՒԻ 200,000,000 ՁԵՐՔ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 9 ԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԵՐՈՒՄԱՅԻՏ

ԳՐԵՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ։

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ։

Յրանալի և օտար երկիրներու վրայ կաւտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր։

Կը դանձէ եգիպտոսի և արաւ-սահմանի վրայ քաշուած փոխանա-կագրեր։

Աւանդ ձգուած գրամներուն փո-խարէն կանխորոշ պայմանաւժով մուհակներ կուտայ։

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՒՄ

ԵԱՐԱԹԱԿԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) զեպի Բերէա, Իզմիր, Մի-տիլի և Կ. Պոլիս։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստ-ներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շա-բաթ օր, առաւօտեան ժամը 7ին։

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժա-մանակ կ'ունենան շոգենաները Բի-

բէա հանդիպելուն, Աթէնք այցելել։

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՒՄ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) զեպի Բոս-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէր-սին և Իսկէնտէրուն։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստ-ներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին։ Տաւնըհինգ օրը անգամ մը՝ երթուել կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏԵ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԵՑՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանսոց համար գիտել Ընկերութեան Աղեք-սանդրիոյ, Բոս-Սայիտի, Սիէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրքի ամեն մասնաճիւղերուն։

1--1902

ՅԱՆՋՆԱԿԱՆ-ԴՈՐՄԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՋՆԿԱՑԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և շրջականերէն կ'ընդունուին՝ Պոլիս, Վիեննայի և արտասահմանի ուրիշ կեդ-րոններ գտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրկի, Պրոնշուիկի վիճակահանու-թեանց տոմսակներու, Եղիպտական Բրէտի Գոն-սիէի, Բումբէի երկաթուղւոյ բրոմէաներու, և դարձեալ ամսականներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային։

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերա-բերեալ ապարանքները ըլլալու են կանխիկ փո-թի միջոցաւ. Գիրքերու համար կարելի է նա-խապէս կէսը զրկել և մնացեալը «գոնթո ում-պուրման» վճարել այն պահուն, երբ յանձ-նարարուածները զրկուին իրենց հասցէներուն։

Մինչև 20 զրշ. արժէքով յանձնարարութիւն-ներու համար Եղիպտ. Յ. միլիոնոց գորշմա-թուղթեր կ'ընդունուին։

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի կայն ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի։

Հասցէ՝

Garabed Erzenatzian
Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԻՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, կանանց և աղայոց համար։

Ձախի վրայ զգեստներ, լուսազոյն նկարներով։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍՅԻ
Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւորով

ԱՆԲԸՐԷՐ ՆԻՓՈԼԱ. տրղթ. թօն. 5500	2ԻԽԱՋՈՅ տարողութիւն թօն. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ. " " 5500	2ԱՐ " " 5500

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԶՐԻՄ ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր-կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաւորուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ԾՈՎՈՒ ՍՍԻԱԿԱՆ ԵԶԵՐՔՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՍ և ԱԶՈՅԻ ԾՈՎ.

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Ա-ղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵՆԱՄ, ՊԵՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐ-ՄԻՆ, ԳԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐ-ՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ.

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Աղեքսանդրիա, Թղթաւան փողոց։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խորվական Հրամանագրով
25 Գունվար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 493,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.
Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր.

Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում.
Եգիպտական Ազգային Դրամատունը կըն-դունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթա-ցիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէ-քաւոր թուղթերու վրայ։

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՓՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՄ

Ստամբուլի հիւանդութիւնը շատ անգամ զԺուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծ-մունք, այնդութիւն և փոխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ա նն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու-ղեղէն մէյմէկ քիչ առնել։

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ ալբուրային գե-ղերու նման չի խանդարեր ստամբուր։

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ։

34—316

Գ. ԵՒ Կ. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԷՎԻԹԻԹԷ — ԳԼԽԱՌՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԿԻՆ ՁԱԲԹԹԵԻ ՇԷՆՔԸ